ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ընդհանուր տնային գործեր՝ տունը մաքուր պահելու համար: MPP 30-757.11

ԶՈՒԳԸՆԹԱՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Կերակուրների պատրաստում. Ճաշացուցակների կազմում, սննդամթերքի նախապատրաստում, կերակուրների պատրաստում և մատուցում: MPP 30-757.131

Մաքրություն ուտելուց հետո. Խոհանոցի տարածքի մաքրում և խոհանոցային պարագաների, ամանեղենի ու սպասքի լվացում, չորացում և տեղավորում:
MPP 30-757.132

Ամենօրյա լվացք. Հագուստի, տնային գործածության իրերի և վուշե գործվածքեղենի լվացում, չորացում, ծալում և տեղավորում: MPP 30-757.134

Սննդամթերքի գնումներ. Սննդամթերքի ցուցակի կազմում, մեկնում խանութ և վերադարձ, գնումների կատարում, գնված սննդամթերքի բեռնում, դատարկում և պահպանում: MPP 30-757.135(b)

Այլ գնումներ, հանձնարարություններ, ընթերցանություն. Ներառում է՝ 1) այլ անհրաժեշտ պիտույքների գնում, 2) փոքր և անհրաժեշտ հանձնարարությունների կատարում, օրինակ՝ դեղատոմս վերցնել, և 3) կարևոր փաստաթղթերի, օրինակ՝ դեղամիջոցի ցուցումների, սննդամթերքի պիտակների, կենցաղային ծառայությունների հաշիվների կամ վարձակալության պայմանագրերի ընթերցում: MPP 30-757.135(c)

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Շնչառական օգնություն. Խնամառուին օգնության տրամադրում՝ շնչառության հետ կապված ոչ բժշկական բնույթի ծառայությունների մատուցում, ինչպիսիք են թթվածնի մատակարարման ինքնավերահսկումը և շնչառական սարքերի մաքրումը: MPP 30-757.14(b)

Աղեստամոքսային տրակտի և (կամ) միզասեռական օրգանների հիգիենիկ խնամք. Խնամառուին օգնության տրամադրում զուգարանից օգտվելիս (ներառյալ նստեցնելը և բարձրացնելը), գիշերանոթ կամ անկողնուն կից աթոռակ-

զուգարանակոնք կամ միզանոթ օգտագործելիս, կղանքընդունիչի, հոգնայի և (կամ) կատետրային անոթների դատարկում և մաքրում, խանձարուրների և մեկանգամյա օգտագործման ներքին սպիտակեղենի և տակդիրների օգտագործում,
խնամառուի մարմնի սրբում ու մաքրում և նրա ձեռքերի լվացում ու չորացում: MPP 30-757.14(a)
Կերակրում. Խնամառուին օգնության տրամադրում կերակուր ուտելիս, ներառյալ նրա դեմքի ու ձեռքերի մաքրում ուտելուց առաջ և հետո: MPP 30-757.14(c)
Անկողնային հիվանդի ամենօրյա լոգանք. Անկողնուն գամված խնամառուի մարմնի ամենօրյա
մաքրում խոնավ սպունգով: MPP 30-757.14(d)
Օգնություն հագնվելիս. Խնամառուին ամբողջ օրվա ընթացքում ըստ անհրաժեշտության օգնության տրամադրում շորերը հագնելիս և հանելիս: MPP 30-757.14(f)
Խնամք դաշտանային շրջանում. Օգնություն հիգիենիկ միջադիրների և տակդիրների արտաքին տեղադրման հարցում: MPP 30- 757.14(j)
Շարժվելու ընդունակություն և օգնություն տրանսպորտային միջոց նստելիս և իջնելիս. Խնամառուին օգնության տրամադրում քայլելիս կամ տան տարածքում տեղաշարժվելիս, ներառյալ՝ դեպի լոգասենյակ և վերադարձ այնտեղից, բժիշկներին և (կամ) այլընտրանքային հաստատություններ այցելելու համար դեպի մեքենան ուղեկցելիս, մեքենա նստեցնելիս, մեքենայից իջեցնելիս և վերադառնալիս: MPP 30-757.14(k)
Տեղաշարժ (պառկելիս և վեր կենալ, նստել և բարձրանալ). Խնամառուին օգնության տրամադրում կանգնելիս, նստելիս կամ պառկած դիրքից մեկ այլ դիրքի փոխվելիս և (կամ) մի կահույքից կամ սարքավորումից մյուսին անցնելիս:
MPP 30-757.14(h)
Լոգանք, բերանի խոռոչի լվացում և (կամ) մարմնի խնամք. Խնամառուին օգնության տրամադրում լոգանք կամ ցնցուղ ընդունելիս, ատամները խոզանակելիս, ատամի թել օգտագործելիս և արհեստական ատամնաշարը մաքրելիս, մազերն օճառահեղուկով լվանալիս, չորացնելիս և սանրելիս կամ խոզանակելիս, սափրվելիս և լոսյոն, դիմափոշի, հոտազերծիչ օգտագործելիս: MPP 30-757.14(e)

Մաշկի շփում և դիրքի փոփոխում. Մաշկի շփում շրջանառությունը խթանելու և (կամ) մաշկային ծածկույթի քայքայումը կանխելու նպատակով, մարմնի շրջում անկողնու մեջ և դիրքի այլ փոփոխություններ, շարժողական վարժությունների կատարման վերահսկում: MPP 30-757.14(g)

Խնամք կամ օգնություն պրոթեզների օգտագործման ժամանակ և դեղամիջոցների ընդունման հսկողություն. Օգնություն պրոթեզային հարմարանքները, ներառյալ տեսողական և լսողական ապարատները դնելիս կամ հանելիս և դրանք պահպանելիս ու մաքրելիս, հիշեցում խնամառուին դեղատոմսով տրվող և (կամ) ազատ վաճառվող դեղամիջոցներն ընդունելու մասին, վերքերի մշակման Medi-set միջոցների նախապատրաստում գործածման համար:
MPP 30-757.14(i)

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Խնամառուի տեղափոխում և վերադարձ հետևյալ նպատակներով՝ 1) տեսակցություններ բժիշկների, ատամնաբույժների և այլ բուժաշխատողների հետ, կամ 2) այցեր այն վայրերը, որոնք անհրաժեշտ են առողջապահական նշանակության հարմարանքներ կամ սարքեր և հատուկ հանդերձանք հարմարեցնելու և կրելու համար, երբ այդ նպատակներով տեղափոխումը նախատեսված չէ Medi-Cal ծրագրի շրջանակներում: Դա նաև ներառում է խնամառուի տեղափոխում այն վայրերը, որտեղ այլընտրանքային ռեսուրսները տնային աջակցության ծառայություններ են մատուցում խնամառուին՝ IHSS-ի փոխարեն: MPP 30-757.15

ՄԵԾԱԾԱՎԱԼ ՄԱՔՐՈՒՄ. Տան ամբողջական մաքրում վտանգավոր բեկորների կամ կեղտի վերացման նպատակով: Թույլատրված է միայն մեկ անգամ և միայն որոշակի հանգամանքներում: MPP 30-757.12

ԲԱԿԻ ՄԱՔՐՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՂԲԻՑ. Թեթև աշխատանք բակում հետևյալ նպատակներով՝ 1) բարձր խոտերի կամ մոլախոտերի և աղբի հեռացում, երբ դրանք հրդեհի առաջացման վտանգ են ներկայացնում (թույլատրված է միայն մեկ անգամ), կամ 2) սառույցի, ձյան կամ այլ վտանգավոր նյութերի հեռացում մուտքերից և կարևոր անցուղիներից, երբ այդ նյութերը

վտանգավոր են դարձնում մուտքը դեպի տուն: MPP 30-757.16

ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. Ինքն իրեն չտիրապետող, շփոթված, մտավոր անլիարժեք կամ հոգեկան հիվանդ խնամառուի վարքի հսկում և անհրաժեշտության դեպքում օգնություն՝ խնամառուին մարմնական վնասվածքից, վտանգավոր իրավիճակից կամ դժբախտ պատահարից պաշտպանելու համար: Գործում են որոշ սահմանափակումներ: MPP 30-757.17

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. IHSS մատուցողների կողմից տրամադրվող ծառայությունների ուսուցում և ցուցադրում, որպեսզի խնամառուն կարողանա ինքնուրույն իրականացնել ներկա պահին IHSS մատուցողների կողմից իրականացվող ծառայությունները: Գործում են որոշ սահմանափակումներ: MPP 30-757.18

ՆԱԽԱԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Հետևյալ պայմաններին համապատասխանող ծառայություններ՝ 1) գործողություններ, որոնք խնամառուներն ինքնուրույն կկատարեին, եթե ֆունկցիոնալ սահմանափակումներ չունենային, 2) գործողություններ, որոնք, խնամառուի ֆիզիկական կամ մտավոր վիճակը հաշվի առնելով, անհրաժեշտ են խնամառուի առողջության պահպանման համար, և 3) գործողություններ, որոնք ներառում են դեղամիջոցների ընդունման վերահսկում, մաշկի ծակում կամ բժշկական ապարատների տեղադրում մարմնի բացվածքի մեջ, մանրէազերծ պրոցեդուրաներ կամ առողջապահության լիցենզավորված մասնագետի սովորեցրած գիտելիքների հիման վրա դատողություն պահանջող գործողություններ: Գործում են հատուկ սահմանափակումներ: MPP 30-757.19

ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ (MANUAL OF POLICY AND PROCEDURES, MPP) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ՝ ԱՅՑԵԼԵԼՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ: